ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 49

«27» 05 2021 թ. ք. Երևան

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՄՈՒԼԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԹԵԺ ԳԾՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԱՀԱԶԱՆԳԵՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ, ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ, ԸՍՏ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ, ԴՐԱՆՑ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱԽԱԶԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք ՀՀ ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում հնարավոր ընտրական իրավախախտումների վերաբերյալ մամուլի հրապարակումները, քաղաքացիների հաղորդումները և ՀՀ գլխավոր դատախազության թեժ գծով ստացված ահազանգերը գրանցելու, ուսումնասիրելու, ըստ ենթակայության ուղարկելու, դրանց քննարկման նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու և այդ ոլորտում ՀՀ դատախազության գործունեությունը համակարգելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի աշխատանքները համակարգելու և պատշաճ կազմակերպելու անհրաժեշտությունից ելնելով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել «20.06.2021թ. ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում արձանագրված առերևույթ ընտրական բնույթի հանցագործությունների (ՀՀ քրեական օրենսգրքի 149-154.9-րդ հոդվածներ) մասին ՋԼՄ-ների հրապարակումների, քաղաքացիների հաղորդումների և

ՀՀ գլխավոր դատախազության թեժ գծով ստացված ահազանգերի (այսուհետ՝ հաղորդում) հաշվառման, դրանք տարածքային և քննչական ենթակայությամբ ուղարկելու և ընթացքը լուծելու հարցում ՀՀ գլխավոր դատախազության աշխատանքային խմբի և դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների միջև աշխատանքի կազմակերպման վերաբերյալ» ուղեցույցը և համապատասխան N 1 և N 2 հավելվածները (կցվում են):

2. 2021 թվականի հունիսի 20-ին ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում արձանագրված առերևույթ ընտրական բնույթի հանցագործությունների (ՀՀ քրեական օրենսգրքի 149-154.9-րդ հոդվածներ) մասին ԶԼՄ-ների հրապարակումների, քաղաքացիների հաղորդումների և ՀՀ գլխավոր դատախազության թեժ գծով ստացված ահազանգերի հաշվառման, դրանք տարածքային և քննչական ենթակայությամբ ուղարկելու և ընթացքը լուծելիս առաջնորդվել սույն հրամանով հաստատված ուղեցույցի պահանջներով:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին ու դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

20.06.2021թ. ԱԺ արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում արձանագրված առերևույթ ընտրական բնույթի հանցագործությունների (ՀՀ քրեական օրենսգրքի 149-154.9-րդ հոդվածներ) մասին ՁԼՄ-ների հրապարակումների, քաղաքացիների դիմումների, բողոքների, հաղորդումների և ՀՀ գլխավոր դատախազության թեժ գծով ստացված ահազանգերի (այսուհետ՝ դիմում, բողոք, հաղորդում) հաշվառման, դրանք տարածքային և քննչական ենթակայությամբ ուղարկելու և ընթացքը լուծելու հարցում ՀՀ գլխավոր դատախազության աշխատանքային խմբի և դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների միջև աշխատանքի կազմակերպման վերաբերյալ

1. 20.06.2021թ. ԱԺ արտահերթ *ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում արձանագրված առերևույթ ընտրական բնույթի հանցագործությունների մասին հաղորդումների մշտադիտարկումը և դրանք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված տարածքային ու քննչական ենթակայության կանոններին համապատասխան դատախազության տարածքային մարմինների միջոցով ՀՀ ոստիկանության, ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության, ՀՀ քննչական կոմիտեի տարածքային բաժիններին և ՀՀ հատուկ քննչական ծառայություն ուղարկելը իրականացնում է <u>միայն</u> ՀՀ գլխավոր դատախազությունում ստեղծված աշխատանքային խումբը:*

- ՀՀ գլխավոր դատախազի 11.05.2021թ. թիվ 47 հրամանի 4-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ առերևույթ ընտրական բնույթի հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների մշտադիտարկումը իրականացնում է ՀՀ դատախազության հանրային կապերի բաժինը (այսուհետ՝ հանրային կապերի բաժին):

- Հանրային կապերի բաժինը՝ մինչև քվեարկության օրը և քվեարկության հաջորդ օրվանից հետո աշխատանքային խմբի ղեկավարի կողմից որոշված պարբերականությամբ, իսկ քվեարկության և դրա հաջորդ օրը յուրաքանչյուր 30 րոպեն մեկ պարբերականությամբ մշտադիտարկման արդյունքները ներկայացնում է աշխատանքային խմբի ղեկավարին:

- Աշխատանքային խմբում ուսումնասիրվելուց հետո, այն հաղորդումները, որոնք տարածքային ենթակայությամբ պետք է ուղարկվեն դատախազության տարածքային մարմիններ, մուտքագրվում են ՀՀ դատախազության ընդհանուր բաժնում՝ դրանց վրա դնելով ընդհանուր բաժնի մուտքի դրոշմակնիքը և «ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» դրոշմակնիքը և վերադարձվում աշխատանքային խմբին:

- Աշխատանքային խմբի ղեկավարի կամ նրա հանձնարարությամբ աշխատանքային խմբի անդամների կողմից այդ դիմումները, բողոքները, հաղորդումները՝ «ստուգողական գործողություններ կատարելու», «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով նյութ

նախապատրաստելու», «քրեական գործ հարուցելու», «հաղորդումն ըստ ենթակայության ՀՀ հատուկ քննչական ծառայություն ուղարկելու» կամ այլ կոնկրետ մակագրությամբ մակագրվում է աշխատանքային խմբի անդամ, համապատասխան տարածքը սպասարկող դատախազին (տարածքների բաժանումը տե՛ս հավելված 1-ում):

- Աշխատանքային խմբի անդամ, համապատասխան տարածքը սպասարկող դատախազը ստանալով հաղորդումը նախապատրաստում է դրա վրա առկա մակագրության բովանդակությանը համապատասխան գրություն՝ հասցեագրված մարզի կամ Երևան քաղաքի կամ Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազին /պատճենը՝ Երևան քաղաքի դատախազին/:

- Աշխատանքային խմբի անդամ, համապատասխան տարածքը սպասարկող դատախազը աշխատանքի օպերատիվությունն ու արդյունավետությունն ապահովելու նպատակով գրությունը և կից հաղորդումները սկանավորում ու mulberry համակարգով, ինչպես նաև էլեկտրոնային փոստով, իսկ դրա անհնարինության դեպքում նաև Ֆաքսով ուղարկում է մարզի կամ Երևան քաղաքի կամ Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազություն:

- Աշխատանքային խմբի անդամ, համապատասխան տարածքը սպասարկող դատախազը յուրաքանչյուր հաղորդման վերաբերյալ տեղեկատվությունը՝ «Հաղորդման բովանդակություն», «Աղբյուր», «Գործողություն» և «Ընթացք» ձևաչափով ներմուծում է տվյալ տարածքի վերաբերյալ տեղեկանքում (տեղեկանքի ձևը տե՛ս հավելված 2-ում), իսկ տեղեկանքը անմիջապես ուղարկում աշխատանքային խմբի ղեկավարի կողմից լիազորված խմբի անդամին:

- Աշխատանքային խմբի անդամ, համապատասխան տարածքը սպասարկող դատախազը տեղեկանքի կազմման աշխատանքն ավարտելուց հետո մարզի կամ Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազին հասցեագրված գրության և կից հաղորդումների թղթային տարբերակը, առկայության դեպքում նաև էլեկտրոնային կրիչները հանձնում է աշխատանքային խմբի քարտուղարին, վերջինս էլ իր հերթին դատախազության ընդհանուր բաժնի պետին՝ սահմանված կարգով հասցեատիրոջը առաքելու նպատակով:

<u>Վերը նշված գործողությունները կատարվում են հանրային կապերի բաժնի կողմից աշխատանքային խմբին հանձնված հաղորդումների յուրաքանչյուր խմբաքանակի հետ կապված:</u>

<u>ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ</u>

<u>Ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ՀՀ ոստիկանության համապատասխան տարածքային ստորաբաժանում, քննիչին կամ դատախազին հանցագործության մասին դիմում, բողոք, հաղորդում (ընտրական բնույթի հանցագործության վերաբերյալ) ներկայացնելու դեպքում, մարզի կամ Երևան քաղաքի</u>

վարչական շրջանի դատախազը այդ մասին հաղորդմամբ տեղեկացնում է աշխատանքային խմբի ղեկավարին՝ միասնական հաշվառում կատարելու նպատակով:

2. Մարզի կամ Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազի գործողությունները աշխատանքային խմբի՝ իրենց տարածքը սպասարկող դատախազի կողմից ուղարկված առերևույթ ընտրական բնույթի հանցագործությունների վերաբերյալ հաղորդումները ստանալուց հետո:

ա) Հաղորդումը մարզի կամ Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազությունում ստացվելու է դրանով ստուգողական գործողություններ կատարելու, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով նյութ նախապատրաստելու, քրեական գործ հարուցելու կամ այլ կոնկրետ ցուցումով:

բ) Մարզի կամ Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազը պետք է լուծի նյութերի ենթակայության հարցը:

- ենթակայության հարցը լուծելիս որպես սկզբունք պետք է ի նկատի ունենալ հետևյալը՝ ***ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների ենթակայությանը վերապահված ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով նյութերի նախապատրաստումը իրականացնելու են ՀՀ ոստիկանության տարածքային բաժինները, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ ՀՀ քննչական կոմիտեի քննիչների ենթակայությանը վերապահված ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով նյութերի նախապատրաստումը իրականացնելու են ՀՀ քննչական կոմիտեի քննիչները: Մասնավորապես,***

- Մարզի կամ Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազը ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ, 150-րդ, 154.1-դդ , 154.2-րդ և 154.9-րդ հոդվածներով նյութեր նախապատրաստելը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը կայացնելը հանձնարարում է ՀՀ ոստիկանության համապատասխան տարածքային ստորաբաժանմանը, իսկ

- ՀՀ քրեական օրենսգրքի 149.1-րդ, 152-154-րդ և 154.4-154.8-րդ հոդվածներով նյութեր նախապատրաստելը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը կայացնելը հանձնարարում է ՀՀ քննչական կոմիտեի քննիչներին:

- Եթե վերը նշված սկզբունքի կիրառմամբ առաջանում է ծանրաբեռնվածության անհամաչափություն, ապա մարզի կամ Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազը իրավասու է շրջանցել վերը նշված սկզբունքը և հավասարակշռել վարույթն իրականացնող մարմինների միջև ծանրաբեռնվածությունը.

- Յուրաքանչյուր դիմումի, բողոքի, հաղորդման վերաբերյալ կազմված փաստաթղթերը՝ եզրակացություն, քրեական գործ հարուցելու, քրեական գործ

հարուցելը մերժելու և հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին որոշումները երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկել աշխատանքային խմբի ղեկավարին

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մարզի կամ Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազը անհրաժեշտության դեպքում, նույնաբնույթ ընտրական բնույթի հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների քննարկման, դրանց հիման վրա նյութերի նախապատրաստման, քրեական գործերի հարուցման, հարուցված քրեական գործերի նախաքննության, ինչպես նաև բարդ ու տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տվող հարցադրումներով միասնական պրակտիկա ապահովելու նկատառումով, խորհրդակցում է աշխատանքային խմբի ղեկավարի կամ աշխատանքային խմբի անդամ, համապատասխան տարածքը սպասարկող դատախազի հետ:

3. Այն գործողությունները, որոնք պետք է կատարվեն ԱԺ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում արձանագրված յուրաքանչյուր առերևույթ ընտրական բնույթի հանցագործությունների մասին հաղորդման քննարկման շրջանակներում:

ա) Եթե հաղորդումը պարունակում է այս կամ այն առերևույթ ընտրական բնույթի հանցագործությունների վերաբերյալ վերացական, ընդհանուր և անորոշ տեղեկատվություն, դրանում բացակայում են նույնականացման համար անհրաժեշտ տեղեկություններ, մասնավորապես ***անձանց շրջանակ կամ հանցագործության վայր կամ տեղամասային կենտրոնի համար, տեսագրություն, ձայնագրություն և այլն,*** ապա բոլոր նման հաղորդումները վերը նշված ենթակայության կանոնների պահպանմամբ մարզի կամ Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազի կողմից ուղարկվում են ՀՀ ոստիկանության համապատասխան տարածքային բաժիններ՝ դրանցով ստուգողական գործողություններ կատարելու նպատակով :

Այդպիսի պարտադիր գործողություններից են՝

- հրապարակման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով հարցում տեղեկատվությունը հրապարակած ԶԼՄ-ին.

- եթե տեղեկատվությունը սոցիալական ցանցերում կամ այլ համացանցային կայքերում հրապարակել է ֆիզիկական անձը, ապա անձը հայտնի լինելու դեպքում վերջինիս հրավիրել ոստիկանության համապատասխան բաժին և հարցման ենթարկել հրապարակման մեջ նշված հանգամանքների վերաբերյալ.

- հրապարակման մեջ նշված հանգամանքները օպերատիվ-հետախուզական միջոցառումներով ստուգելու նպատակով զեկուցագիր ներկայացնել ոստիկանության տվյալ բաժնի պետին.

- եթե հրապարակման մեջ նշված է անձանց որոշակի շրջանակ, ովքեր ականատես են եղել իրավախախտմանը կամ դրա վերաբերյալ տեղեկատվություն կարող են հայտնել հարցման ենթարկել այդ անձանց.

- կատարել յուրաքանչյուր հրապարակման բովանդակությունից բխող այլ ստուգողական գործողություններ:

Նշված գործողությունների կատարման արդյունքում դիմումի, բողոքի, հաղորդման մեջ նշված հանգամանքները չհիմնավորվելու կամ դրանց վերաբերյալ՝ նյութեր նախապատրաստելու համար անհրաժեշտ և բավարար տեղեկատվություն ձեռք չբերելու դեպքում հանձնարարել հաղորդումը եզրակացությամբ կցել կարգագրին:

բ) Եթե հաղորդումը ի սկզբանե բովանդակում է հանցագործության վերաբերյալ բավարար տեղեկատվություն՝ ***կոնկրետ անձանց շրջանակ, հանցագործության վայր, ժամ, տեղամասային կենտրոնի համար, իրավախախտի անուն, ազգանուն, կարգավիճակ, տեսագրություն, ձայնագրություն և այլն,*** կամ այդպիսիք ձեռք են բերվել դիմումի, բողոքի, հաղորդման հիման վրա ձեռնարկված ստուգողական գործողությունների արդյունքում, ապա անհրաժեշտ է այդ ընտրական հանցագործության վերաբերյալ դիմումի, բողոքի, հաղորդման ընթացքը լուծել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներովսահմանված կարգով:

Նյութերի նախապատրաստման ընթացքում, ըստ անհրաժեշտության իրականացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողություններ, մասնավորապես.

- դեպքի վայրի զննություն, հետազոտման համար նմուշներ վերցնել, փորձաքննության նշանակում.

- բացատրություն վերցնել հանձնաժողովի անդամներից, վստահված անձանցից, դիտորդներից, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրված, ընտրության և քվեարկության ընթացքը լուսաբանող ՁԼՄ-ների ներկայացուցիչներից, իրավախախտմանը ականատես ընտրողներից.

- կատարել այլ անհրաժեշտ դատավարական գործողություններ.

Եթե նյութերի նախապատրաստման արդյունքում չի հիմնավորվել հաղորդման մեջ նշված հանգամանքը, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համապատասխան հիմքով կայացնել որոշում նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

գ) Եթե ընտրական բնույթի հանցագործության վերաբերյալ հաղորդումը առերևույթ պարունակում է ՀՀ քրեական օրենսգրքի 149-154.9-րդ հոդվածներով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի հատկանիշների վերաբերյալ բավարար փաստական տվյալներ, ապա աշխատանքային խմբի անդամ, համապատասխան տարածքը սպասարկող դատախազի հետ քննարկելուց հետո լուծել քրեական գործ հարուցելու հարցը

և նախաքննության շրջանակներում ամբողջ ծավալով կատարել գործի հանգամանքներից բխող քննչական և այլ դատավարական գործողություններ: Մասնավորապես՝

- հարցաքննել հանձնաժողովի անդամներին, վստահված անձանց, դիտորդներին, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրված, ընտրության և քվեարկության ընթացքը լուսաբանող ԶԼՄ-ների ներկայացուցիչներին, առերևույթ և ընտրական բնույթի հանցագործությանը ականատես ընտրողներին.
- զննել ընտրական փաստաթղթերը (ընտրողների ցուցակներ, տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյան և այլն) անհրաժեշտության դեպքում առգրավել դրանք.
- նախաքննության շրջանակներում անձին դատավարական կարգավիճակ տալու, նրա նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու հարցերը քննարկել աշխատանքային խմբի անդամ, համապատասխան տարածքը սպասարկող դատախազի հետ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների հետ քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարել կամ ընտրական փաստաթղթեր զննել բացառապես անհետաձգելի դեպքերում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն. «Լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի ներկայացուցիչները (այսուհետ՝ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչներ) քվեարկության օրը կարող են իրականացնել ընտրությունների և քվեարկության վերաբերյալ լուսաբանում Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո:»

ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում նաև զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու համար:

Վերը նշված հոդվածների համադրված վերլուծությունը վկայում է, որ արարքը պետք է որակել ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածով՝ որպես զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի լիազորությունների իրականացմանը խոչընդոտել, միայն այն դեպքում, երբ խոչընդոտվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրված, ընտրության և քվեարկության ընթացքը լուսաբանող ԶԼՄ-ի ներկայացուցչի լիազորությունների իրականացմանը: Մնացած դեպքերում, եթե ԶԼՄ-ի ներկայացուցիչը թեև լուսաբանում է ընտրական գործընթաց, սակայն հավատարմագրված չէ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողում (այս դեպքում քվեարկության գործընթացը չի կարող լուսաբանել, քանի որ առանց ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից տրված վկայականի չի կարող մուտք գործել տեղամասային կենտրոն), ապա նրա լիազորությունների իրականացմանը

խոչընդոտելուն ուղղված գործողությունները պետք է դիտարկել ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի համատեքստում, որպես լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը:

Ուստի նմանատիպ փաստական հանգամանքներով նյութերի նախապատրաստման և քրեական գործերի նախաքննության շրջանակում անհրաժեշտ է պարզել ԶԼՄ-ի ներկայացուցչի՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողում հավատարմագրված լինելու հանգամանքը

ՀՀ դատախազություն